## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

## ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՆՈՐԱԿԵՐՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

# Ո Ր Ո Շ Ու Մ

<<29>> ապրիլ 2020թ. N 28

***ՆՈՐԱԿԵՐՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԲԱՐԵԿԱՄՈՒԹՅԱՆ ՓՈՂՈՑ 4-ՐԴ ՇԵՆՔ ԹԻՎ 4 ԲՆԱԿԱՐԱՆԻՆ ԿԻՑ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԿՑԱԿԱՌՈՒՅՑԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ***

Արմավիրի մարզի Նորակերտ համայնքի բնակիչ Ապրես Արշավիրի Խաչատրյանը դիմել է Նորակերտի համայնքապետարան իրեն սեփականության իրավունքով պատկանող /հիմք՝ <<Ավագ Ավագյան>> Ա/Ձ-ի /որակավորման վկայական թիվ 0331/ կողմից 20.03.2020թ կատարված չափագրությունը/ Նորակերտ համայնքի Բարեկամության փողոց 4 շենք թիվ 4 բնակարանին կից ինքնակամ կառուցված 31.1քմ մակերեսով կցակառույցի օրինականացման խնդրանքով:

Ինքնակամ կառույցը կառուցված չէ քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք: Ինքնակամ կառուցված կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքններն ու օրենքով պահպանվող շահերը և վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածով, <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և ՀՀ Կառավարության 18.05.2006թ. թիվ 912-Ն որոշման պահանջներով,

*որոշում եմ՝*

1. Արմավիրի մարզի Նորակերտ համայնքի Բարեկամության փողոց 4 շենք թիվ 4 բնակարանին կից ինքնակամ կառուցված 31.1քմ մակերեսով կցակառույցը ճանաչել օրինական:
2. Շենքի զբաղեցրած հողամասը անհատույց բաժնային սեփականության իրավունքով փոխանցել շենքի բնակարանների և ոչ բնակելի տարածքների սեփականատերերին:
3. Ինքնակամ կառուցված կցակառույցի օրինականացման համար սահմանված 15861 /տասնհինգ հազար ութ հարյուր վաթսունմեկ դրամը/ ՀՀ դրամ վճարը սույն որոշման

ընդունման օրվանից 60 օրվա ժամկետում չվճարելու դեպքում որոշումը համարել ուժը կորցրած:

4. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

*ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ* *Ա. ՊԵՏՐՈՍՅԱՆ*

*2020 թվականի ապրիլի 29*
*Նորակերտ համայնք*